



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

« _____ » 2017թ.

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16

N: _____

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐԶ ՈՒՍՈՒՅՉԻ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ ուսուցիչներ, սրտանց շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝
Ուսուցչի օրվա կապակցությամբ:

Հայ ժողովուրդը խորին հարգանքով է արտասանում ուսուցիչ բառը. դա վկայում է
մանկավարժի հանդեպ յուրաքանչյուրիս ունեցած անսահման սիրո, ակնածանքի,
հարգանքի ու դպրոցական տարիների հետ կապված հիշողությունների մասին:

Այսօր առաջնահերթ խնդիրներից մեկը ժամանակի պահանջներին
համապատասխան կրթված ու զարգացած սերունդ ունենալն է: Ինչպիսի դպրոց
կունենանք առաջիկայում, այնպիսին էլ կլինի մեր վաղվա քաղաքացին, այն մեծապես
կախված է ձեր ամենօրյա դժվարին և պատվաբեր աշխատանքից:

Ստեղծելով բարձրակարգ ուսման համար անհրաժեշտ պայմաններ՝ համոզված եմ՝
ցանկացած խնդիր ու դժվարություն հնարավոր կլինի հաղթահարել:

Սիրելի՛ ուսուցիչներ, հավատարիմ մնալով մեծն ուսուցչապետ Մաշտոցի
ժառանգությանը՝ եղեք նախաձեռնող՝ աշակերտ կրթելու ձեր պատվավոր առաքելության
մեջ:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ